

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ



Վինչենցոյ Պէլլինի երգափան.

Խտալական արդի երաժշտութեան քաղցրախօս և մեղամաղձիկ սարեակն, անմահ անունն Վինչենցոյ Պէլլինի, ծնաւ 'ի Գաղանիա յամին 1805: Իւր մանկութեան հասակէն մեծ եռանդն ցուցնելով երաժշտական ուսման, տալիս չորեքտասանամեայ Նաբոլիի երաժշտական բարձրագոյն վարժարանը

մտաւ, ուր իրեն ուսուցիչ ունեցաւ ըզ- շինկարէլլի ասպետը, անուանի առաւել Պէլլինիի հայրագուծ ուսուցիչ ըլլալուն՝ քան ուրիշ պատճառաց համար, և որուն անունը յետոյ նուիրական ըրաւ Պէլլինի՝ դնելով զայն 'ի գլուխ իւր չքնաղ Նոյրմա թատրերգութեան: Պէլլինի մեծ օգուտ մը չկրցաւ քա-

զել իւր ուսուցչին դասախօսութիւն-
ներէն . երաժշտութիւնը իւր մտաց մէջ
աւելի ներշնչումն պիտի բլլար . և էր ,
քան ներթափանց հաշիւներով և յար-
մարութիւններով արուեստ մը . և իւր
առաջին երկասիրութիւնքն , յորս յի-
շեր 15 սինֆոնիա , 3 պատարադք և
12 սաղմուք , տկար և անորոշ գրու-
թիւնք են , անհամեմատ ամենեկին իւր
ապագայ քաղցր և զոգցեռ երկնազդե-
ցիկ ներշնչմանց :

Քսաճամեայ էր երբ փորձ փորձեց
իւր հանճարը թատրերգական երաժշ-
տութեամբ հրահանգել , և 1825ին Նա-
բոլի երաժշտական բարձրագոյն վար-
ժարանին մէջ 'ի հանդէս ելաւ առաջին
անգամ Սիտէլյորն և Սյարվիւնս փոր-
րիկ թատրերգութեամբ , որ սկիզբ մը
կրնայ համարուիլ իւր չքեղ ընթացքին .
և այնպէս փութով հռչակը սփռուե-
ցաւ , որ երկրորդ տարին ճինսովայի Գար-
լոյ Ֆելիչէ մեծ թատրոնը նորոգուելով ,
չքեղ բացման հանդիսին համար 'ի հան-
դէս ածաւ Պիւսկա և Ֆելիսանտոյ
թատրերգութիւնը . յաջորդ տարին
Միլանու հռչակաւոր Սգալա թատրո-
նը իւր Ռիքարտ թատրերգութիւնը ա-
ռաջին անգամ լսեց , ինչպէս նաև ըզ-
Սիլվանիէյա արևելեան խաղերով զար-
դարուն թատրերգութիւնը : Եթէ ու-
նեցաւ ձախգոյնութիւն մը 'ի Բարմո-
Ջայիլայի ձախող ելքը եղաւ , որուն
պատճառը բաղուժը զայն ներկայացը-
նողը համարեցան , Բայց այս ձախո-
ղութիւնը տակաւին հռչակուած զայն
մոռցրեւէ առաւ նոր թատրերգութիւն
մը (1830) Գափուլիէի և Մոնկէրքիի ,
զոր ներկայացընել տուաւ Վենետիկոյ
միշտ արդարագաս Ֆենիչէ թատրոնին
մէջ :

Անկէ վերջը դրած խաղերը յաղթա-
նակաց չարք մը կը կազմեն և հրաշա-
կերտք են , որոնք իւր անունը այնքան
փառաբանող ելաւ պատճառք եղան . և
յիշառի Սիլվանտոյա և Նոյում , զորս
1831ին ներկայացընել տուան 'ի Մի-
լան , Պէադրիլէ տա Դէկուտա 'ի Վենե-

տիկ և 1834ին Բուրիդանի 'ի Բարիդ ,
ոչ միայն իր գործոց , հապա համարէն
երաժշտական զգացմանց և ներշնչմանց
միշտ չնախարհիկ պիտի մնան , Յիւրա-
ւի որպիսի որ ալ բարեբաղդ դանուցաւ
Պէլլինի իրեն յերթող ունենալով զՖե-
լիչէ Ռոմանի և երգիչք ինչպիսիք էին
Ռուպինի , Լուպաշ , Դամպուրինի և
Բասգա , Մալիպրան և Կրիզի հռչակ-
անուն տիկնայքը , ամենն ալ երգեւու ա-
րուեստին և ձայնին հրաշակերտք , ա-
կայն առանց իսկ այն ձայներու միշտ
գերազանց , միշտ հիանալի պիտի մնան
Նոյում , Սիլվանտոյա և Բուրիդանի :

Պէլլինի թերևս երաժշտական ար-
հեստին չունէր այն մեծ հմտութիւնը և
խորութիւնը ինչպէս Ռոսսինի , Մէյէր-
պեր և Մէրգադանգէ , չնը կրնար գին-
քը դիտուն և վարպետ երգահան մը
կաշել . երաժշտական գործեաց մասը
չատ անգամ տկար կը թողու և ան-
որոշ . մեծամարմին և ահաւոր ներգաշ-
նակութեանց ձեռք չի զարնէր ինչպէս
Վալենտին մը , Կունոյ և Գոթիլոյ . ամենայն
ինչ 'ի նմա բնական է և ներշնչումն ,
ներշնչումն՝ զոգցեռ գերմարդկային ,
քաղցր , տխուր , արտաշարժ և գեղեցիկ
որ զմտորդ երկրէս կը բարձրացընէ և
բիւրուս որ անոյշ և տխուր զաղափար-
ներով կը լիցընէ , քաղցրախօս սարեակ
մը , ինչպէս ըսինք վերը , որ եթէ ստէպ
ալ կրկնէ իւր անոյշ երգը , միշտ սի-
րելի է և անձկալի :

Անց որ իր ծագի 'ի հասակին մէջ
խամբեցաւ , Տակալին երեսուն և հինգե-
րորդ տարին չպատկած՝ փոխճանեցաւ 'ի
Ռիւդոյ Բարիլու մօտ և թաղուեցաւ 'ի
Փէր Լա Շէզ , ուսկից իւր հայրենակիցք
զինքը հանելով 1876ին փոխադրեցին
մեծաւ չքով և հանգէսներով 'ի Գազա-
նիա , Հօն երկրորդ տարին 1877ին չքեղ
չիրիմ մը կանգնեցաւ , ձեռակերտ ճիւղ
Պաղգիսդա Դասարա քանդակագոր-
ծին , 'ի պատիւ անմահանուն երգչին որ
իւր համբաւուն հետ միշտ կրեր տարեր
էր հմար իւր հայրենեաց սիրելի ա-
նունը :